ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

I. Աղքատության հաղթահարման միտումները

Հայաստանում հողային բարեփոխումների, ինչպես մյուս պոստսոցիալիստական երկրներում, սկզբնական շրջանում ակնկալվում էր, որ տնտեսական խոր ճգնաժամի պայմաններում, հայ գյուղացին, մեծ- մեծնակ մնալով իրեն հատկացված հողի ու անասունների հետ, իր քրտնաջան աշխատանքով ապահովում էր երկրի ՀՆԱ-ի ավելի քան կեսը: Դա հնարավորություն տվեց գյուղական բնակչությանը խուսափել համատարած ծայրահեղ աղքատությունից:

Սակայն, բացի գյուղատնտեսությունից, գյուղական տնային տնտեսությունների մի մասը մինչև հիմա էլ չունի զբաղմունքի այլ ոլորտներ: Ոչ հողօգտագործական ինքնազբաղվածությունից կամ փոքր մասնավոր բիզնեսից առաջացած եկամտաբերը չնչին է: Իր հերթին աշխատատեղի միայն 1/3-ն է աշխատում ամբողջ տարին: Այդ պատճառով էլ գյուղական աղքատության կրճատման հիմնական գործոնը մնում է բնամթերային տնտեսությունը և տարբեր տեսակի տրանսֆերտները:

Աղյուսակ 1

Աղքատության մակարդակի ըստ բնակավայրերի
(աղքատներ, ծայրահեղ աղքատներ, %)[1]

Բնակավայրեր	1998/99թթ.		2004թ.		2007թ.	
	աղքատներ	ծայրահեղ աղքատներ	աղքատներ	ծայրահեղ աղքատներ	աղքատներ	ծայրահեղ աղքատներ
Բնդամենը Հայաստանում	56.1	21.0	34.6	6.4	25.5	3.8
Քաղաքային բնակավայրեր	62.1	26.2	36.4	7.5	24.7	4.6
Երևան	58.1	24.8	29.2	6.1	20.0	3.2
Այլ քաղաքներ	65.5	27.4	43.9	9.2	29.8	6.1
Գյուղական բնակավայրեր	48.2	14.1	31.7	4.4	25.5	2.3

Հայաստանում աղքատության մակարդակի կրճատումը պայմանավորող առավել կարևորագույն գործոնը կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճն է:: Դրա հետ միաժամանակ որոշակի դեր է խաղացել մասնավոր տրանսֆերտների անընդհատ հոսքը, նպաստելով բնակչության սպառման զգալի ավելացմանը: Ըստ տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալների, 2000-2007թթ. Հայաստանի առկա բնակչության (3 մլն.)) 1/3-ն կամ ավելի քան 1 մլն. մարդ, դուրս է եկել աղքատությունից, իսկ աղքատ բնակչության մասնաբաժինը կրճատվել է ավելի քան 2.2 անգամ՝ 56%-ից նվազելով 2007թ. կազմել է 25%: Առավել արագ նվազել է ծայրահեղ աղքատությունը (5.5 անգամ)):

Սակայն անկնհայտ է: նաև այն փաստը, որ Երևանը, որտեղ կենտրոնացված է երկրի տնտեսական և ֆինանսական ներուժը, առավելագույնն է օգտվել տնտեսական աճից:

[1] Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական զեկույց, Երևան 2006թ.,,եջ 46, 2008թ.,,եջ 28:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ մինչև 2004 թվականը գյուղական բնակավայրերում ծայրահեղ աղքատությունը կտրուկ նվազել է, աղքատությունը դարձել է համեմատաբար ավելի համասեռ, քան այլ բնակավայրերում: Այստեղ որոշակի դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ 2004թ. եղել է գյուղատնտեսության համար հաջող տարի, որը զուգակցվել է գյուղմթերքների արտադրողների իրացման գների աճով:

Սակայն 2004-2007թթ. միջև ընկած ժամանակաընթացքում աղքատությունը գյուղական բնակավայրերում նվազել է 19.6%-ով, մինչդեռ Երևանում և այլ քաղաքներում՝ գրեթե 32%-ով: 2007թ աղքատ է եղել գյուղական բնակչության 25.5%-ը, այն դեպքում, երբ Երևանում՝ 20%-ը, այլ քաղաքներում՝ 29.8%-ը: Գյուղական բնակավայրերում ծայրահեղ աղքատության մակարդակն ամենացածրն է այն պարզ պատճառով, որ գյուղացին հնարավորություն ունի իր տնտեսության հաշվին լուծել հացի խնդիրը և ապահովել նվազագույն սննդի պահանջը:

Աղյուսակ 2

Ըստ մարզերի աղքատության մակարդակի փոփոխությանն անցել է հետևյալ պատկերը (%-ով)[1]

Մարզերը	2004		2007	
	ծայրահեղ աղքատներ	աղքատներ	ծայրահեղ աղքատներ	աղքատներ
Ք. Երևան	6.1	29.2	3.2	20.0
Արագածոտն	5.6	35.4	3.0	22.2
Արարատ	6.4	32.7	3.5	25.5
Արմավիր	6.6	36.0	3.8	30.7
Գեղարքունիք	4.5	41.9	2.5	29.6
Լոռի	4.5	31.3	3.6	26.8
Կոտայք	9.2	39.3	6.1	30.0
Շիրակ	10.4	48.8	6.0	32.1
Սյունիք	5.9	36.5	3.7	24.0
Վայոց Ձոր	4.1	28.9	2.3	13.7
Տավուշ	3.3	30.5	3.3	21.6
Ընդամենը	6.4	34.6	3.8	25.0

Աղյուսակի տվյալներից դժվար չէ նկատել, որ 2004-2007թ. աղքատության ցուցանիշները նվազել են բոլոր մարզերում, այնուհանդերձ, ավելի արագ տեմպերով է այդ ցուցանիշի անկում գրանցվել Վայոց Ձորի (53%-ով), Արագածոտնի (37%-ով), Շիրակի, Սյունիքի մարզերում և Երևանում (մոտ մեկ երրորդով):

Ծայրահեղ աղքատության մակարդակը զգալիորեն կրճատվել է բոլոր մարզերում: Այնուամենայնիվ, աղքատության միջին հանրապետական մակարդակի համեմատ բարձր ցուցանիշները պահպանվում են Շիրակի, Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում: Շիրակի գոտին, որպես աղետի գոտի, շարունակվում է մնալ հանրապետության ամենաաղքատ տարածաշրջանը:

2. Ովքեր են աղքատ գյուղական բնակավայրերում

Գյուղատնտեսական արտադրությունը մեծապես պայմանավորված է բնակլիմայական պայմաններով: Բավական է նշել, որ 2006թ. արտադրվել է 212.5 հազ., իսկ 2007թ.՝ 452.5 հազ. տ հացահատիկ: Սակայն ոչ պակաս դեր են խաղում տնտեսական գործոնները(ֆինանսական հնարավորությունները, ճանապարհները, ոռոգման համակարգը, կապը, գյուղմթերքի մշակման և պահպանման հնարավորությունները, աշխարհագրական դիրքը, տնտեսությունների չափը, աշխատունակ անդամների թիվը և այլն):

<u>Աշխարհագրական դիրքը և հողի առանձնահատկությունը</u>. տնային տնտեսությունների բոլոր հետազոտությունների արդյունքում հաստատվել է այն օրինաչափությունը, որ գյուղական

[1] Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական զեկույց, Երևան 2008թ., էջ 131:

բնակչությունն ամենաաղքատն է այն մարզերում, որտեղ գյուղատնտեսության համար պայմաններն առավել անբարենպաստ են: Օրինակ, լեռնային, ծովի մակերևույթից 1700 մ և բարձր գոտիներում 2007թ. աղքատության մակարդակը կազմել է 27.1%, այն դեպքում, երբ մինչև 1300մ՝ 20.6%: Սակայն բարձրադիր գոտիներում ծայրահեղ աղքատությունը կազմում է ընդամենը 1.2%, որը մասամբ պայմանավորված է այդ բնակավայրերի բնակիչներին հատկացվող ընտանեկան նպատակով:

Այնուամենայնիվ, լեռնային շրջաններում ծայրահեղ աղքատությունից խուսափելու հիմնական պատճառը բնակչության մեկ շնչի հաշվով ավելի շատ հողատարածքի առկայությունն է: Հողազուրկ գյուղացիները կազմում են գյուղական բնակչության 4.8 %-ը, որոնց 34.3%-ն աղքատ է: 2007թ. 0.5-1հա հողակտոր ունեցող տնային տնտեսությունների աղքատության մակարդակը 14.5%-ով ցածր է, քան գյուղական աղքատության ընդհանուր մակարդակը:

<u>Հողի որոգման հնարավորությունները.</u> տնային տնտեսությունների հետազոտությունը բավարար տեղեկատվություն չի տալիս հողի որակի մասին, ուստի որպես հողի որակի ցուցանիշ դիտարկվում են որոգման հնարավորությունները: Հայաստանում 2007թ. իրենց կողմից տնօրինվող և օգտագործվող հողատարածքները որոգել են տնային տնտեսությունների 74%-ը (2005թ. 59%-ի դիմաց): Սակայն որոգվող հողատարածքներ ունեցող տնային տնտեսությունների միայն 52%-ն է որոգում իրեն պատկանող հողը 75-100%-ով:

Որոգման համակարգից ամենից շատ օգտվում են Արարատի և Արմավիրի մարզերը:

Որոգման ծառայություններից բավարարված է հարցվողների միայն 24%-ը, գրեթե բոլոր գյուղացիական տնտեսությունները նշում են որոգման ջրի դիմաց բարձր սակագները, որոգման ջրի մատակարարման ընդհատումները, ջրատարերի անբավարար վիճակը, պոմպերի հետ կապված վթարները և այլն:

<u>Գյուղատնտեսական տեխնիկայից</u> օգտվելու և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ վերցնելու համար հնարավորությունները խիստ սահմանափակ են, տնային տնտեսությունների կողմից տնօրինվող և օգտագործվող գյուղատնտեսական տեխնիկայի մեծ մասը հին է՝ ավելի քան տաս տարվա վաղեմության:Գյուղական բնակավայրերում հետազոտված ընտանիքների միայն 8.9 %-ն է 2007թ. պարտք կամ վարկ վերցրել:

Գյուղական բնակավայրերում բարձր է <u>ոչ նյութական աղքատությունը:</u> Գյուղական բնակչությունն անհամեմատ ավելի է զրկված մարդկային հնարավորություններից: Գյուղում ավելի բարձր է սոցիալական մեկուսացվածությունը, առողջապահական, կրթական, մշակութային, տեղատվական ծառայությունների անմատչելիությունը, հետևաբար նաև մարդկային աղքատությունը:

Գյուղատնտեսության ենթակառուցվածքները, հատկապես ներհամայնքային ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում: (Հարցվողների 68%-ը գնահատել է վատ): Գյուղաբնակ տնային տնտեսությունների 11.2%-ի համար մոտակա բուժհաստատությունը գտնվում է 6 կմ-ից ավելի հեռավորության վրա, դեղատունը՝ 30.4%-ի, մանկապարտեզը՝ 28%-ի համար: Գյուղաբնակ տնային տնտեսության անդամը մոտակա բուժհաստատություն հասնելու համար ծախսում է միջինը 29 րոպե, դեղատուն՝ 40 րոպե, մանկապարտեզ՝ 34 րոպե, տարրական դպրոց՝ 23 րոպե:

3. Գյուղական աղքատության հաղթահարման առաջնահերթ խնդիրները

ՀՀ կառավարությունը մշակել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ-ի) նոր տարբերակ, որն ըստ էության երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ավելի ընդգրկուն ծրագիր է: Տարածքային համաչափ զարգացումը և գյուղական նյութական և ոչ նյութական աղքատության հաղթահարումը հանդիսանում է գերակա հիմնախնդիրներ:

Գյուղատնտեսության բնագավառում առաջնահերթ խնդիր են հանդիսանում «գյուղատնտեսության արդյունաբերականացումը և արտադրություն-վերամշակում-շուկա շղթայի լիարժեք գործարկումը, դրա հաշվին ճյուղում գյուղատնտեսությունում զբաղվողների եկամուտների աճը» («Հայաստանի Հանրապետություն», 29.04.2008թ.):

Դիտարկենք վերջին կարևորագույն հարցը: Անկասկած, գյուղատնտեսական գործունեությունից ստացած եկամուտների աճը գյուղական աղքատության կրճատման հիմնական գործոնն է: Սակայն, ինչպես ցույց են տալիս տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները, գյուղատնտեսական գործունեությունից ստացած իրական եկամուտներն ավելանում են ավելի դանդաղ, քան այլ կարգի եկամուտները:

Այսպես, 2004 և 2007թթ. ընթացքում գյուղական բնակավայրերում բնակչության միջին ամսական ամբողջական եկամուտները (մեկ շնչի հաշվով) ավելացել են 48.5%-ով, այդ թվում գյուղմթերքի և անասունի վաճառքից ստացած դրամական եկամուտը՝ 10.2%-ով, իսկ ոչ դրամական եկամուտը (սննդամթերքի սպառումը)՝ 25.7%-ով:

Արդյունքում, 2007թ. գյուղատնտեսական գործունեությունն ապահովել է գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամտի (մեկ շնչի հաշվով) միայն 41.3%-ը, 2004թ. արձանագրված է 51.6%-ի համեմատ:

Գյուղաբնակ բնակավայրերում գյուղատնտեսական գործունեությունից ստացած դրամական և ոչ դրամական եկամուտը 2007թ. մեկ շնչի հաշվով ամսական կազմել է 9706 դրամ, այն դեպքում, երբ ծայրահեղ (պարենային) աղքատության գծի արժեքը (մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար) 2007թ. կազմել է 15753, իսկ աղքատության ընդհանուր գծինը՝ 23168 դրամ:

Ակնհայտ է այն փաստը, որ գյուղատնտեսությունից ստացած եկամուտները խիստ հետ են մնում ոչ միայն աշխատավարձի աճից, այլև գյուղատնտեսության զարգացման տեմպերից: Այսպես, 2007թ. 2004թ. համեմատությամբ հանրապետության բնակչության իրական եկամուտները, վիճակագրական տվյալներով, ավելացել են 48.6%-ով, իրական միջին ամսական աշխատավարձը՝ 62.3, գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 22.6%-ով, մինչդեռ գյուղական տնային տնտեսությունների դրամական եկամուտները, համադրելի գներով, ավելացել են միայն 1%-ով: Եվ դա այն պարագայում, երբ վերջին տարիներին զգալիորեն բարձրացել է գյուղատնտեսության ապարանքայնության մակարդակը և որոշ պարենային ապրանքների շուկայական գները: Օրինակ, 2007թ. 2004թ. համեմատությամբ բանջարեղենի և կարտոֆիլի գները բարձրացել են 42.6%, մրգինը՝ 23.9%-ով: Սակայն գյուղմթերքի գների բարձրացումից գերազանցապես օգտվում են վերավաճառողները: Մյուս կողմից, առաջնային տեմպերով է ավելանում միավոր արտադրանքի վրա կատարած ծախսերը:

Բավական է նշել, որ դիզելային վառելիքի գինը 2004-2007թթ. ավելացել է 83%-ով, այն դեպքում, երբ ցորենի իրացման գինը ունեցել է իջեցման միտում (2004թ. 1կգ՝111 դրամ, 2006թ.՝ 88, 2007թ.՝ 104 դրամ): Առանձին վերլուծաբանների հաշվարկներով, գյուղատնտեսական «արտադրողին բաժին է ընկնում իր իսկ կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքի իրացումից ստացված համախառն եկամտի միայն 20-25%-ը»:[1]

Այս համառոտ վերլուծություններից բխում են մի շարք հետևություններ, որոնց շարքում առաջնակարգ խնդիրը ենք համարում. գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացումը, գյուղական վայրերում նոր աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսական հողերի լիարժեք օգտագործումն ու ոռոգման ցանցի ընդլայնումը, գյուղացիական տնտեսությունների կոոպերացումը և մասնագիտացումը, սելեկցիոն և տոհմային գործի բարելավումը, արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացումը, գյուղմթերքների իրացման և արտահանման խնդիրների լուծումը, գնային «մկրատի» վերացումը և այլն:

Այդ հիմնախնդիրների լուծումը պահանջում է պետության և դոնոր կազմակերպությունների ակտիվ աջակցությունը:

---

[1] Արսեն Ավագյան, Գյուղատնտեսության զարգացման միտումները անցումային տարիներին: Հայաստանի սոցիալական միտումները, տեղեկատվավերլուծական պարբերական, նոյեմբեր, 2004, էջ 18: